

3592

15  
5-16

3592

15  
5-16

14 JUL 2009

Կարս 1 1930 Կոնստանդուպոլսի Կ

Գ. Եղիշյան

Հ Ո Ղ Ե Բ Ա Ա Պ Ա Ր Յ Ո Ւ Շ

Հոգեկան Յեղբայրասպասար  
Յերեվան

Յերայ հիպոպ


**ՀՈԳԵԿԱՆ ՅԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹ  
ՅԵՐԱԶ. ՀԻՊՆՈՋ**

**ՀՈԳԵԿԱՆ ՅԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹ**

Նյարդային սիստեմի ամեն մի պրոցես գիտակցական յերե-  
վույթ չի տալիս, բայցի այդ, ամեն մի գիտակցական յերեվույթ  
զսյություն ունենալուց հետո, մոռացության և յենթարկվում,  
բայց ամհետ չի կորչում հոգեկան կյանքի համար:

Գիտակցությունը կարելի չէ նմանեցնել մի շրջագծված,  
սահմանագծված դաշտի, վորի կենտրոնում գտնվում են ամենա-  
պարզ գիտակցվող հոգեկան բովանդակությունները, այդ կենտրո-  
նից մինչև սահմանագիծը յերամ տարածութան վրա գտնվում  
են համեմատաբար ավելի թույլ պարզությամբ գիտակցվող բովան-  
դակությունները, սահմանագծի մոտ և նրա վրա գտնվում են  
հազիվ հազ գիտակցվողները, իսկ սահմանագծից այն կողմը  
անգիտակից, յենթագիտակից հոգեկան վիճակներն են տեղավոր-  
ված: Գիտակցությունը, հոգեկան ապրումներն այսպիսի տարա-  
ժական ստորաբաժանումներ չունեն, ինդիրը պատկերավոր  
դարձնելու համար միայն դիմում ենք այս որինակին: Գիտակցու-  
թյան սահմանագծից այն կողմը յեղած յենթագիտակից ապրում-  
ների ուսումնասիրության վրա հին հոգեբանությունն առանձին  
ուշադրություն չի դարձրել, թեև, ինչպես Հիմա պարզվում է,  
ամեն մի մարդ ունի ժառանգական տենդենցներ, ձեռք բերովի  
հմտությունների, հիշողությամբ և յլ բովանդակությունների  
հսկայական յենթագիտակից մի պահեստ, վոր մեծ ազդեցություն  
և թողնում մարդու վարմունքի և գիտակցության վրա: Յենթա-  
գիտակիցը մի տեսակ զաղանի ձեռք է, վորն ազդում, ձեռվու-  
րում է մեր վարմունքը, թեև մենք այդ յենթագիտակցի մասին  
պարզ պատկերացում չունենք:

Մարտիտական հոգեբանության ներկայացուցիչներին մե-  
կի-Լ. Ջեմսոնի կարծիքով՝ «յենթագիտակցի հսկայական դերը  
մարդկային գործերի մեջ և բնավորության կազմակերպման



15579-57

ինդրում, նրա հսկայական նշանակութունն իբրև պրոպագանդի ֆակտոր, նոր հոգեբանության հատուկ հայտնադործություններն են»:

Դրա համար ել նա ճիշտ է համարում հոգեբաններից մեկի այն կարծիքը, թե մարդու պսիխիկան նման է ջրային սառցա- լեռներին, վորի 7/8-դական մասը ջրի տակն է (յենթազխտակցի իմաստով), իսկ 1/8-դական մասը ջրի յերեսին (գիտակցի իմաս- տով):

Անցնենք այն փաստերին, վորոնք անկասկած են դարձնում յենթազխտակցի գոյությունը:

1. Ներկայի ապրումները, մի վորոշ ժամանակ անցնելուց հետո, մոռացվում են, շատ կարճ կամ յերկար ժամանակ մո- ռացված մնալուց հետո, կարող են նորից վերադարձվել, վե- րապրվել, նշանակում է, մոռացված հոգեկան վիճակները շա- րունակել են իրենց գոյությունը փոփոխված վիճակով. այդ փո- փոխված վիճակին անվանում են յենթազխտակցի վիճակ, ուրեմն այժմս անմիջապես չողտադործվող հոգեկան վիճակները (հիշա- դական) կազմում են յենթազխտակցի պահեստը:

2. Լինում են դեպքեր, յերբ մեր մեջ այնպիսի մտքեր և դա- դողություններ են առաջանում ըմբռնումների ժամանակ, վորոնց ծագման և ձևակերպման մասին պարզ պատկերացում չունենք: Տեսնում եմ մի մարդու, վորի հետ շատ կարճատև գրույց ունե- նալուց հետո, յեղբակացնում եմ, վոր նա շատ անդուր մարդ է, թեև նա սիրալիք, քաղաքավորի և խելացի յե: Ի՞նչն է պատճա- րը: Հալանորեն նրա միմիկան, շարժումները, բառերն արտասա- նելու յեղանակը, վորոնց վրա առանձին ուշադրություն չեմ դարձրել, ապավորություն են թողել իմ յենթազխտակցի սֆե- րայի վրա, վոր և նպաստել է այդպիսի կարծիք կազմելուն:

Ապայեցիպիսի, մաքն խոսելիս, ապացինք, վոր նոր ըմբռ- նումները հարստանում, վերամշակվում են հին փորձի ուղնու- թյամբ, բայց այդ հին փորձի տարրերը մշտապես պարզ չեն գի- տակցվում, այդ սինթեզի ժամանակ մենք ղղում ենք, վոր ա- ուարկան այժմ ըմբռնում ենք ավելի ճոխացած ձևով, բայց պարզ չենք պատկերացնում, թե անցյալ փորձի վոր տարրերն են վորոշակի աղղում մեր ըմբռնման վրա, այդ տարրերի սինթեզը տեղի յե ունենում յենթազխտակցի կերպով և մեզ գիտակցելի յե դառնում միմիայն հետեվանքը:

Մեզ մի աուարկա ծանոթ է թվում, յերբ և ուր, ինչ պայ- մանների մեջ ենք տեսել, չգիտենք, մոռացել ենք, բայց և այն-

դեա աուարկան մեզ ծանոթ է թվում: Ծանոթության ղղացմուն- քը յենթազխտակցի մտապատկերների ու նրանց գուգորղումների հետեանքն է գիտակցության մեջ:

3. Մի խնդրով է ղղաղված մեր միտքը, մաածում եմք մի հարցի մասին, հանկարծ մեզ համար անհասկանալի պատճառնե- րով մի յեղբակցության ենք գալիս, թե ինչու այդ, և վոչ մի տրիչ յեղբակցության յեկանք, չգիտենք, գուգորղման ինչ տե- սակ ողակների վրայով հասանք այդ յեղբին, նույնպես չգիտենք: Պատճառն են յեղել այն յենթազխտակցի ապրումների գուգոր- ցումները, վորոնք տեղի են ունենում մտածման պրոցեսի ժա- մանակ, բայց մենք պարզ չենք գիտակցում, գիտակցում ենք մի- միայն ղրանց տված հետեանքը, վորն է մաքի յեղբակացու- թյունը:

Մի գեկուցում կամ դասախոսություն կարդալիս մաքի բո- ւր ողակները պարզորոշ չեն կաղակցվում գիտակցության մեջ, մեզ հայտնի յե միայն մեր ընդհանուր մտաղբությունը, իր հիմ- նական ստորաբաժանումներով, մնացած մաքերը, մանրամաս- նությունները, նուրբ անցումները տեղի յեն ունենում, մի տեսակ իրենք իրենց, առանց մեր կամքի և ցանկության, կարճես նը- րանք մեր գիտակցության հետևը կաուուցվում, մշակվում են և մի անտեսանելի ձևերի միջոցով հրվում են դեպի մեր գիտակ- ցությունը. մեր պսիխիկան կարելի յե յերկու հարկանի տան նը- մանեցնել, վորի ներքին և թե վերին հարկում աշխատանք է տե- րի ունենում, յեթև յերկու տեղի աշխատանքների մեջ համաշա- փություն կա, հետեանքը լինում է տրամաբանական ճիշտ մը- րածողությունը՝ իր գործնական հետեանքներով:

4. Յերեկոյան ղղաղված ենք մի խնդրով, խնդիրը չենք կա- բողանում վճուել. աուավոտյան, յերբ վեր ենք կենում, խնդիրն աղղեն վեղված է, նշանակում է գիշերը, քեի ժամանակ, խըն- ցելը յենթազխտակցի մշակման և յենթարկվել:

5. Ստեղծագարծությունը, մանավանդ գեղարվեստականը, յենթակա յե յենթազխտակցի վերամշակման, այս բանը հաստա- տում են շատ անվանի գեղարվեստագետներ, վորոնց կարծիքով ստեղծագործությունը հեղեղի պես մի յերևույթ է, և տեղի յե ունենում մեր կամքից անկախ. յենթազխտակցի հոգեկան կյունքը մի տեսակ ներս է խուժում դեպի գիտակցությունը և նրանում մի ամբողջ հեղափոխություն աուաջ բերում: Վոր այդ պրոցեսի մեջ գիտակցությունը ղեր ունի, դա անկասկած է (տես յերեակա-

յություն առաջադրութեանը), բայց վոր յենթագիտակցի դերը  
ևս հսկայական է, այդ ևս կասկած չի վերցնում:

6. Յենթագիտակիցը հսկայական չափերով ազդում է մեր ա-  
րարքների և վարմունքների վրա: Ժառանգական տվյալները և սո-  
ցիալական փորձը մարդու մեջ առաջացնում են մտքերի, գշաց-  
մունքների և բնազդների վորոշ կոմպլեքսներ, վորոնք հարկադր-  
բուն են մարդու վորոշ տեսակ արարքներ կատարելու: Այդ կոմպ-  
լեքսները միշտ ևլ մարդու գիտակցութեան մեջ չեն լինում, այլ  
ծածկված են մտում յենթագիտակցի մեջ, յեթե մանավանդ այդ  
կոմպլեքսներն իրենց բովանդակութեամբ ամօթարեր են անհատի  
համար: Յենթագիտակցի մեջ խորասուզված կոմպլեքսները հան-  
դիստ չեն մտում, այլ դանազան յեղանակներով ազդում են գի-  
տակցութեան վրա:

ա) Յենթագիտակից, ամօթարեր այդ կոմպլեքսները, յերբ  
սկսում են ազդել մեր դեմքերի և ուրիշների կողմից նկատելի ար-  
արքների վրա: մենք մեր արարքներն արդարացնելու համար  
գիտակցութեան մեջ հորինում ենք անտրամաբանական, անճիշտ  
հիմունքներ՝ դրանով բավարարելու մեզ և ուրիշներին, և շատ  
հաճախ մենք բոլորովին հավատացած ենք, վոր այս հիմունքները  
մեր անկեղծ համոզումներից են առաջացել, բայց յեթե ինքնուր  
մեզ և մեր արարքների իսկական զբոսադատումներն անկեղծ ան-  
խիցի յենթարկենք, կնկատենք, վոր հիմքը դրված է յենթագիտակ-  
ցի մեջ յեղող եզոյիստական, շատ անգամ ամօթարեր մտքերի  
կամ բնազդների կոմպլեքսների վրա: Որինակ՝ մեկը կնատայց է  
խոսելիս այնպես և ցույց տալիս, թե դա հետևանք է կանանց հո-  
ղերանութեան ճիշտ ուսումնասիրութեան, այն ինչ, իսկական  
պատճառն անհաղոզ սերն է յեղել: եզոյիստական շահերը թայֆու-  
յի անդամին հարկադրում են իր արարքները համար արդարացու-  
յի չի և պատվարներ հիմունքներ վորոնելու, թեև այդ բոլորը չի  
մունքում դրված է յենթագիտակցի մեջ յեղող եզոյիստական շա-  
հեր: Արարքները արամարանական և արդարացուցիչ դարձնելու  
այս յերևույթը կոչվում է ռացիոնալիզացիայի պրոցես:

բ) Մարդու մեջ գոյութուն ունեցող իրար հակադիր կոմպ-  
լեքսների մեջ հաշտութեան և մտնում նաև դիսաադիզացիայի մե-  
ջոցով, նույն մարդու մեջ իրար հակադիր կոմպլեքսները գիտակ-  
ցութեան մեջ իրար հետ չիման մեջ չեն մտնում, իրար դեմ չի  
պայքարում, կարծես հոգեկանը յերկու իրարից ջոկ մասերի մ-  
բաժանվել, վորոնք իրար նեղութեան չեն տալիս. որ՝ կրոնակա-  
հավատը և բնագիտական փաստերը, հեղափոխական աշխարհա-

հայացքը և մեղանական կենսածեղ կարող են վորոշ տիպի մարդու  
մեջ կողք կողքի լինել, առանց իրար խանգարելու, կարծես նրանք  
այդ մարդու գիտակցութեան դաշտի մեջ իրար չեն հանդիպում:

գ) Յերբ կոմպլեքսների հակամարտութեանը շատ է ուժեղ,  
այդ դեպքում կամպլեքսներից մեկը մյուսին գիտակցութեանը  
հետ է մղում դեպի յենթագիտակիցը, այս դեպքում անհատը, մի  
վորոշ ժամանակ դոնե, հոգեկան խաղաղութեան է ձեռք բերում  
նրանով, վոր հրաժարվում է հաշի նստել իրեն համար անուր  
փաստերի հետ:

դ) Շատ անգամ հետ մղված, յենթագիտակցի շրջանը մղված  
կոմպլեքսը առիթ է դառնում այլ բնույթի արարքների. նա զար-  
տաղի մանապարհներով արտահայտութեան է գտնում, կարծես  
բուն պատճառը ծածկելու համար: Վշտա մարդը հաճախ հո-  
նաքներ է անում. կալից վախեցող գինվորը վորդեորված յերգում  
է: Այս յերևույթը կոչվում է ինվերզիա:

Հաճախ մարդ իր ստորյա կյանքի մեջ այնպիսի արարքներ է  
կատարում, վորոնց առաջնախու մասին ինքը և վոր մի պարզ  
պատկերացում չունի, բացատրել արարքի պատճառը ինքը չի կու-  
րող: Այդ բոլորի պատճառը յենթագիտակից բնազդները, կոցյա-  
ներն ու սովորութեաններն են:

7. Յենթագիտակցի դերն առանձնապես ցայտուն կերպով  
պարզվում է հոգեկան աննորմալ յերևույթներն ուսումնասիրե-  
լիս: Հիպնոզի կամ գիտակցութեան եպիլեպտիկ մթադնման ժա-  
մանակ անհատն ունենում է այնպիսի գիտակցական սպորումներ,  
կատարում այնպիսի բարդ արարքներ, վորոնց մասին նա պարզ  
պատկերացում չունի, նորմալ ժամանակ չի հիշում, ինչ և արեւ  
պատկերացում չունի, նորմալ ժամանակ չի հիշում, ինչ և արեւ  
և ինչ է կատարել: Յենթագիտակից սպորումների շտրֆիլ նույն ան-  
հատի մեջ առաջանում է յերկու յեսի գիտակցութեանը. այս դեպ-  
քում նույն անհատի մեջ յերկու և նույնիսկ ավելի յեսեր են ապ-  
րում: Հյուսիսային Ամերիկայի վորք քաղաքներից մեկում ապ-  
րում էր մի մարդ, վորն աթիիստ էր, ուժեղ արեւահարութեանից  
հետո, գիտակցութեան խանգարումն է առաջանում և նա գտնում  
է հավատացյալ և մի նոր ազանդի թափառական բարոյիչ: 1887

թ. հունվարի 17-ին այդ մարդն անհայտանում է իր հայրենի քա-  
ղաքից և հայտնվում է մի այլ քաղաքում, մի այլ անունով, նա իր  
անցյալի մասին համարյա հիշողութեան չունի, այդ քաղաքում  
խանութ է բանում և գրազվում առևտրով: Նույն թվի մարտի  
17-ին, այսինքն ճիշտ 2 ամիս հետո, առավոտյան, հրացանի ճալ-

թշուհի պատճառով, արթնանում է և չի հասկանում, թե ինքն ուր է գտնվում. շրջապատն իրեն ոտար է թվում, դարձանում է, թե ինչու իրեն այլ անունով են կոչում, մոռացած է լինում վերջին յերկու ամսվա կյանքը: Հոգեբան Վ. Ջեյմսը նրան հիպնոզի յենթարկում, վորի ժամանակ նա պոստում է վերջին յերկու ամսվա կյանքի մասին, նշանակում է, նրա յենթագիտակցության մեջ կային այդ ապրումները. այս նույն անհասը յերկու յեսի ապրումն է ունեցել յրար հաջորդող ժամանակների մեջ:

Իայց լինում են դեպքեր, յերբ նույն մարդու մեջ նույն ժամանակին լինում են յերկու կամ ավելի յեսեր, այդ յերևույթի պարզ նկատելի յե դիվանարության ժամանակ: Մարդ յենթագրում է թե իր մեջ ապրում է արադադ, սատանա, աղվես, դե, բարձր վոզի և նույնիսկ դիտե, թե մարմնի վոր մասի մեջն է ապրում այդ յերկրորդ յեսը: Այդ յերկրորդ յեսը ջոկ ձայն, ջոկ ձեռադիր, ջոկ վարվելակերպ ունի: Յերբեմն յեսերից մեկը խոսում է, իսկ մյուսը՝ գրում նույն ժամանակ: Նորմալ անձնավորության մեջ յեղող նոր յեսը կառուցվում է յենթագիտակցի մատերիայից. յենթագիտակցի թույլ, ցրելի, աննկատ բովանդակությունները կազմում են ասոցիացիայի շղթաներ և իրենց վրա գրավում դիտակցից ուշադրությունը, բայց այն նոր կառուցված յեսն բնդհանրապես անկատար է, հենց դրանով է բացատրվում դիվանարների արտահայտությունների հոսունությունը, կտրուվածությունը, թոռչքավորությունը, ինչպես և վորոշ մտքերի ու իդեաների տեսականությունը, (պերսեվերացիա). նոր յեսի անկանան արտահայտություններն արդելակիման չեն յենթարկվում: Վորովհետև յերկրորդ յեսի ժամանակ լուսավորվում են ուղեղի այլ յերտերը, վորոնք մինչ այդ թույլ են աշխատելիս յեղել, դրա համար ել դիտակցության մեջ արթնանում են այնպիսի բովանդակություններ, վորոնք շատ վաղուցվանից մոռացված են յեղել բուրովին: Ութեղանում է նաև զգայարանների գործունեյությունը:

8. Գիտակցի և յենթագիտակցի շփման սահմանների հարցը բավականին պարզ լուսարանվում է Ջեյմսի որերառնենքի տեսության շնորհիվ:

Յենթագրենք թե մի մոռացված անուն ենք ուզում մտարբերել. մտարբերումը դիտակցական մի ուրույն պրոցես է, նրա մեջ կա մի ինչ վոր պակասի, բացի զգայություն, վորը շատ ուժեղ է զգացվում: Մեր մեջ մոռացված անունն ակնարկող մի բան է առաջ գալիս, վորը մեզ տանում է վորոշ ուղղությամբ: Յեթե մեզ

վորոշ անուններ են ասում, այդ բացի, պակասի ուրույն բնույթի պատճառով, զգում ենք, վոր դրանք մեր վորոնածը չեն, այդ անունները չեն համապատասխանում բացի, պակասի բնույթին. մեկ մոռացված անվան բացը մի ուրիշ մոռացված անվան բացին չի նմանում: Յերկու մոռացված տարբեր անուններ (Արամ, Մաթենիկ) վորոնելիս իմ դիտակցության մեջ յերկու բուրովին տարբեր պրոցես և կատարվում, յերկու անվան պակասի զգայությունն իրարից տարբեր են, թեև անուն չունեն: Պակասի կամ բացի զգայությունը լիովին տարբեր է զգայության պակասելուց կամ բացակայելուց: Դա մի ինտենսիվ զգայութուն է: Կարող ենք մտապահած լինենք մոռացած բառի միայն ութմը (հնչյունները մոռացված են) կամ առաջին տառը, կամ վանկը, վորը չի հիշեցնում ամբողջ բառը: Ի՞նչ հոգեկան վիճակ է մի բան ասելու մտադրությունը. դա մի բուրովին վորոշ մտադրություն է, տարբեր բուր մյուս մտադրություններից. դա դիտակցության մի այնպիսի ուրույն վիճակ է, վորի մեջ չկան բառերի ու առարկաների զգայական պատկերներ: Մի վորք հետո դիտակցության մեջ բառեր ու պատկերներ հանդես կգան, նախկին մտադրությունն իսկույն չբանում է, իսկ յերբ մտածման արտահայտության համար բառեր են յերևան գալիս, մեր միտքը ընտրում է պատշաճները և մերժում անհամապատասխանները: Գիտակցության այն նախկին վիճակին «այս կամ այն ինչ բան ասելու մտադրության»՝ անունը կարելի յե տալ: Հոգեկան կյանքի մի յերրորդը հենց այդպիսի մտածական սկզբնական ուրվագծերից են կազմված, վորոնք դեռ բառերի ձև չեն ստացել: Ինչպես է, վոր մեկը մի անձանթ բան ստալին անդամ կարդալիս, կարողանում է իր արտասանությանը ճիշտ արտահայտություն տալ: Պատճառն այն է, վոր առաջին նախադասությունը կարդալիս նա մի աղոտ պատկեր է ստանում՝ յերկրորդ նախադասության գեթ ձևի մասին, վոր միանում է այժմ կարդացվող տառին կամ բառերին և հնարավորությունը սեղծում, վոր ճիշտ արտասանվեն: Այս տեսակ արտասանությունը համարյա միշտ կախված է քերականական շարադասությանից: Յերբ կարդում ենք «վոչ ավելի»՝ ապա սպասում ենք «բանի», յեթե կարդում են «թեպես», դիտենք, վոր հետո գալու յե «բայցը», «սակայնը», «բայց և այնպես»: Գալիք բառական և քերականական ձևի նախադրուշացումն այնքան հաստատ ու անվրեպ է, վոր դրքի միտքը չհասկացող ընթերցողն անգամ կարդում է վերին աստիճանի արտահայտիչ և մտալի ձայնով:

Հոգեբանութիւնը պետք է ուշադրութեամբ դարձնի գիտակցութեան այս վոչ պայծառ յերևույթների վրա և ըստ արժանիւնյն գնահատի դրանց դերը մարդկանց կյանքում: Մենք չենք բմբբոնում միայն պայծառ պատկերներ, առարկաների միայն որչեկտրվ հատկութիւնները, այլ ըմբռնում ենք նաև այդ պատկերների հարաբերութիւնները:

Մեր գիտակցութեան մեջ յուրաքանչյուր պատկեր իր շուրջը հոսող ջրի պանզիւմի մեջ է ընկնում (պատկերաւոր արտահայտութիւն է) և սահում է դրանում: Նրա հետ կապված է թե մտիկ, թե հեռավոր բոլոր շրջակա հարաբերութիւնների գիտակցութիւնը, այն շարժումիւթների մարող արձագանքը, վորոնց հետևանքով է այդ պատկերը ծագել, այլև այն արդիւնքների սաղմնավորվող գիտակցութիւնը, վոր ինքն է առաջացնելու: Հոգեկան պատկերի նշանակութիւնն ու արժեքը կախված է հենց այդ լրացումներից, մաքի դրան շրջակա և ընթացակից միջախանն շրջապատից, կամ ավելի ճիշտ կլինի ասել, այդ միջախանն շրջապատը ավյալ պատկերի հետ մի ամբողջութիւն է կազմում: Ծիշտ է, այդ միջախանն շրջապատը պատկերը թողնում է այնպես, ինչպես նա առաջ կար, բայց նրան հաղորդում է նոր նշանակութիւն և թարմ յերանց:

Հարաբերութիւնների այդ գիտակցութիւնը, վորը մանրամասնութիւնների ձեւով ընթացակցում է ավյալ պատկերին, անվանում ենք որերսաններ:

Ձեռքի ընդունած այս որերսանները բոլորովին անգիտակից յերևույթներ չեն, բայց լրիվ, պարզ գիտակցված յերևույթներ են չեն, նրանք կիտախաւար, կիտազիտակից, հաղվ գիտակցութեան դաշտի սահմաններին համող ապրումներ են, վորոնք սակայն, ինչպես տեսանք, հսկայական նշանակութիւն ունեն հոգեկան կյանքը հարստացնելու տեսակետից: Իրանք գտնվում են գիտակցականի և յենթագիտակցականի իրար անցնելու սահմանագծի վրա:

9. Այժմ հարց է արթնանում, թե յենթագիտակցականն արդյոք հոգեկան յերևույթ է միայն, թե գիտակցութեան չեմքի այն մյուս կողմը յեզող, թե՞ նա հոգեկանից բոլորովին տարբեր մի յերևույթ է: Կան հոգեբաններ, վորոնք յենթագիտակից յերևույթներն ուսումնասիրութեան առարկա չեն դարձնում, վորովհետև նրանց հոգեկան յերևույթներ չեն համարում, այլ միմիայն Ֆի-

զիլոզիական սրբաններ, վորոնք հոգեկան գիտակցական կյանք չեն տալիս:

Մինչև այժմ ասածներից տեսանք, թե վորքան մեծ նշանակութեան ունի յենթագիտակիցը գիտակցականի համար, ինչպես նա միախառնվում է վերջինիս հետ, ինչպես այդ յերկու կողմերը հյուսվում են իրար հետ: Յեթե դրանց ընդլայն մեջ հարադատութեան, մոտութեան շիւներ, անհնար կլիներ նրանց վոխաղեցութիւնը:

Իրար նման լինելով հանդերձ, դրանք տարբերվում են իրարից՝ ա) Գիտակցական յերևույթը ուշադրութեան առարկա յե, գիտակցվում է իրեն այժմս մեզնից, մեր յետից գիտակցվող յերկույթ, յենթագիտակիցն ուշադրութեան առարկա չի դառնում, նա մեր յետից ներկայում պարզորոշ գիտակցվող բովանդակութեան չի, վոչ թե ակտուալ, այլ պոտենցիալ գիտակցութիւնն է, վորն ուղղակի, աննկատ ճանապարհներով ազդում է գիտակցութեան չի նա վոչ թե ակտուալ, այլ պոտենցիալ գիտակցութիւնն է, այս յերկու տարբերումների մեջ վորակական վորոշ տարբերութիւն են մտցնում, բայց դրանով դրանք գիտաբար հակադիր յերկույթներ չեն դառնում. զգացմունքը և մտապատկերն իրարից վորակապես տարբեր են, բայց յերկուսն էլ գիտակցական յերկույթներ են: Գիտակցականը և յենթագիտակցականը վորակապես տարբեր են, բայց յերկուսն էլ հոգեկան (պոիսիկական) տարբերումներ են:

բ) Գիտակցական ապրումներն ընդհատական են, ապրվում են, հետո մոռացվում, նորից արթնանում, նորից մոռացվում, այն ինչ յենթագիտակիցն անընդհատ է, բովանդակութիւնները յերկուր ժամանակ, տասնամյակներ շարունակ մնում են, անբաշքնի ժամանակ անդամ չի դադարում յենթագիտակից աշխատանքը: Գիտակցական կյանքն ավելի քիչ բազմազանութիւն, ավելի քիչ հարստութիւն ունի, քան յենթագիտակցականը, վորի մեջ տեղավորված է մեր անցյալի ամբողջ վործը:

գ) Սակայն յենթագիտակից սրբաններն այնպիսի կոպիտիւնացիայի, այնպիսի կարգավորման չեն յենթակա, ինչպես գիտակցականները: Գիտակցականը հոգեկան կյանքի ավելի բարձր լաբման կետն է, ուր կտուցվում են նոր ըմբռնումներ, մաքեր, ստեղծվում նոր կոմբինացիաներ: Գիտակցութեանը տալիս է հոգեկան ավելի պայծառ, ուժեղ և կոորդինացիայի յենթարկված բովանդակութիւններ:

Յերբ մեկի մոտ թուլանում է գիտակցական կյանքը (աննորմալ յերևույթներ), յենթագիտակիցն առաջնակարգ դեր է ստանձնում, այդ դեպքում գիտակցութունը չի յենթարկվում վերջնապատակի, արամարանական որենքները, քայքայվում է գիտակցության միացվածութունը (объединенность) մտավոր աշխատանքը մի վորոշ հունի մեջ չի մտնում: Հասուն նորմալ մարդու մոտ գիտակցութունը գեկավար դեր ունի, նա իր կողմից ազդում է յենթագիտակցականի վրա, խնդիրներ է դնում և շատ անգամ թողնում, վոր յենթագիտակիցն աննկատ կերպով աշխատի այդ հարցերի վրա:

Այս յերկու կողմերը փոխադարձ ազդում են իրար վրա:

## Յ Ե Ր Ա Ձ

Յերայդ գիտակցական գործողութուն է քնի ժամանակ: Յերազոյն իրեն այնպես է զգում, յինչպես արթուն ժամանակ: Մարդ յերազում է այն դեպքում, յերբ նրա ուղեղին հասնում են ներքին կամ արտաքին դրդիւնները, կամ վերարտադրվում են ուղեղի հին դրդիւնները: Մտից, թորքից, ստամոքսից և այլ որդաններից յեկող ներքին դրդիւնները (մանավանդ, յեթե որդանները հիվանդագին վիճակի մեջ են) հասնելով ուղեղին՝ բազմազան յերազների առաջացման առիթ են դառնում:

Արտաքին գրգիռները ևս զգայարանների միջոցով հասնելով ուղեղին, նույնպես զանազան յերազների արթնացման պատճառ են դառնում, այս յերևույթը ապացուցված է Էքսպերիմենտալ ճանաչարհով, յինչպես հետո կտեսնենք: Նորմալ գիտակցական ապրումների (արթուն ժամանակվա) և յերազների արթնացման Ֆիզիոլոգիական մեխանիզմը նույնն է, տարբերութունը նրանումն է, վոր չնչին գրգիռ յերագի դեպքում մեծ հետևանքներ է տալիս: Ընչին ձայնը յերազում թնդանութի դարկ է դառնում, քնածի յերեսին ընկնող մի քանի կաթիլ ջուրը դառնում է հորդ անձրեղ և փոթորիկ թվացող յերագ և այլն: Հոգեբանական ապրումի տեսակետից յերագի և արթուն ժամանակվա գիտակցական բովանդակութունները տարբերվում են նրանով, վոր յերագի ապրումները լինում են անբնական չափերով, տարրինակ, թոհիչքավոր իրենց հաջորդականության մեջ, հաճախ ադատագրված արամարանական մտաճողության կոնարոլից վերհիշված կամ յերեկակայության մտապատկերները յերագողի համար դառնում են ռեալ, իրական ազդումներ: Գեաք է ավելացնել սակայն, վոր յերագի մեջ պատահում են նաև արամարանորեն կապակցված գիտակցական բովանդակութուններ: . . . . .

Ի՞նչ է տեղի ունենում գլխուղեղի մեջ յերագ տեսնելիս: Քնի ժամանակ արգանիզմը հանգստանում է, ցերեկը տեղի ունեցած մեծ քայքայմանը հաջորդում է գիշերվա վերակատուցման և ուժերի հավաքման շրջանը: Մարսողության, արյան շրջանառության

և չնշատութեան որդաններն աշխատում են թեև, բայց համեմատարար ավելի թույլ, ամենից շատ հանդատանում է նյարդային սխտեմբ, մանավանդ գլխուղեղը: Քունն ուղեղին տորմոզված վիճակի մեջ է դնում, բայց իրապես այդ արգելակված վիճակը լրիվ չի լինում, ուղեղի այս կամ այն մասը մասնակի արթուն վիճակի մեջ է լինում: Ինչպես ուժեղ գրգիռները պատճառով մարդ արթնանում է այնպես էլ վորոշ գրգիռների պատճառով մասնակի, թույլ չափով արթնացման են յենթարկվում ուղեղի այս կամ այն մասի բջիջները: Քունը և յերազը նման վիճակներ չեն: Քունը հանդատի վիճակ է, իսկ յերազը մասնակի արթնութեան, քնի ժամանակ գերակշռում է հանդատի, ասիմիլացիայի, բևտիտուցիայի (վերակառուցման) պրոցեսը, իսկ յերազի ժամանակ՝ դիսսիմիլացիայի, քայքայման կամ ծախսման պրոցեսը: Յերազը նման է արթնութեան վիճակին, բայց մասնակի (պարզիկ) արթուն վիճակ է, վորովհետև յերազի ժամանակ ամբողջ ուղեղը չէ արթուն, այլ նրա այս կամ այն մասը, կամ մասերը:

Քանի վոր յերազի ժամանակ չի աշխատում ամբողջ ուղեղը և նրա հենց արթուն մասերի բջիջների գրգռականութեան աստիճանը թույլ է, քանի վոր յերազի ժամանակ մարդի գուգորդման պահեստի բոլոր ողակները միասնաբար չեն աշխատում, դրա համար էլ յերազի մեջ մտապատկերների կառուցումը և նրանց կապակցությունները տեղի չեն ունենում այնպես կարգավորված, ինչպես արթուն ժամանակ: Յերազի ժամանակ պակասում է արքունի ժամանակվա ֆնկտադատական կանտրալ միտքը անկարգ, անկանոն ձև է ընդունում, վորովհետև գուգորդման ճանապարհների ջոկ կայանների գրգռականութեանը փոխված է այնպես, ինչպես արթուն ժամանակ. յերբ վորոշուղեղի բջիջների գրգռականութեանը անկանոն փոխվում է, մարդու քայլվածքն անկանոն է դառնում: Նույն պատճառներով փոխվում են յերազի մեջ տարածութեանը, շարժերն ու մեծութեանները, վորով յերազները մեծ մասամբ դառնում են անբնական և ֆանտաստիկ: Յերազն իր հոգեբանական բնույթով նման է իլլյուզիային, հալյուցինացիային և պասիվ յերեվակայութեանը: Թեև քիչ, բայց և այնպես յերազի ժամանակ լինում են նաև կարգավորված մտքեր ու մտապատկերներ, յերազի մեջ պատահում է, վոր մարդ մի դժվար խնդիր վճռի, բանաստեղծութեան հորինի, բնագիտական գյուտ անի և այլն, յեթև միայն այդ անհատն արթուն ժամանակ դբարվել է այդ հարցերով, այդ կախված է նրանից, թե ուղեղի վոր մասերն են գրգռված և ինչ չափերով: Քնի ժամանակ չի դադարում գիտակցութեան գոր-

ծունեյութեանը. այսպեղ յենթադիտակից ազդակները չնորհիվ գործում են տրամարանական մտածողութեան և ստեղծագործական յերեվակայութեան Փունեցիաները՝ առաջացնելով պատկերավոր գիտակցական բովանդակութեաններ: Յերազը տարրիտակ յերեւույթ չէ, նա գիտակցական մի պրոցես է և պետք է վերլուծվի, ուսումնասիրվի և բացատրվի այն սկզբունքներով, վորոնց ոգնութեամբ ուսումնասիրվում են արթուն ժամանակվա գիտակցական գործողութեանները, վորովհետև յերազը ուղեղի մասնակի արթուն վիճակի հետևանքն է:

Վոմանք կարծում են, վոր յերազի ժամանակ հակայական քունակի մտապատկերներ են իրար հաջորդում, ամենամեծ և արտակարգ արագութեամբ. այդ կարծիքը ճիշտ չէ, վորո՞ծերը ցույց են տվել, վոր յերազի ժամանակ յերոզ մտապատկերների իրար հաջորդելն ավելի արագ չի կատարվում, քան արքունի ժամանակ. յերբեմն սակայն յերազի մտապատկերների հոսանքը արագանում է սովորականից ավելի, այնպես, ինչպես այդ տեղի յե ունենում արթուն ժամանակ, յերբ մարդ վտանդի կամ եմոցիոնալ վիճակի մեջ է:

Ասացինք, վոր յերազը մասնակի արթնութեան յերեվույթ է, բայց բնախոտորեն նա տարբերվում է արթնութեանից նրանով, վոր յերազի ժամանակ մարմինը ընդհանրապես շարժման վիճակի մեջ չէ, այլ հանդիստ, թեև յերազի մեջ ման ենք գալիս, թույլում, ցատկում, վազում ենք և այլն: Ինչպե՞ս է բացատրվում այս յերեվույթը: Շարժման մտապատկերներից դուրս յեկող գրգիռներն այնքան թույլ են, վոր չեն կարող ուղեղի շարժման կենտրոնը գործի դնել, կամ թե չէ, շարժման կենտրոնի գրգռականութեանն այնքան թույլ է, այնպես է տորմոզի յենթարկված, վոր մտապատկերների հետ կապված գրգիռները կանգ են առնում նրա առաջ և չեն ներգործում նրա վրա:

Բայց կան դեպքեր, յերբ շարժման կենտրոնի գրգռվածութեանը նկատելի յե մանավանդ յերեխաների մոտ, նրանք յերազի ժամանակ նկատելի շարժումներ են կատարում: Հասուն մարդն ևս յերազի մեջ մարմնի դիրքի դանազան փոփոխութեաններ և կատարում: Շատ հաճախ քնածի գեմքին նայելով վոր միայն կարելի յե վորոշել, վոր նա յերազի մեջ է, այլ կարելի յե նաև իմանալ, թե նա հաճելի, թե տհաճ յերազ է տեսնում: Կան մարդիկ, վորոնց խոսելու մոտորական կենտրոնը բախական նորմալ գործում է յերազի ժամանակ, նրանք քնի մեջ խոսում են, յերբ մարմնի մյուս մասերը հանդիստ վիճակի մեջ են:

Քնի ժամանակ առանձնապես տարրաբանակ դարձուցություններ են կատարում լուսկոտները (ստանարուլիա) : Քնի ժամանակ լուսկոտները շարժողական կենտրոնն արթուն վիճակի մեջ է, նա կարող է շատ բարդ, վտանգավոր և ներդաշնակված շարժումներ կատարել, սրինակ՝ դժվարին և վտանգավոր տեղերի վրայով քայլել և այլ : Նա համարյա արթուն մտղ է, բայց փոշ լրիվ արթուն մարդ, վորովհետև նրա ուղեղի մյուս մասերը քնի մեջ են : Արթուն մարդը վտանգավոր շարժումներ կատարելիս, վտանգի գիտակցությունը, անցանկալի հեռանքի մտապատկերներն ուղեկցում են նրա շարժումներին և այդ կերպ շարժումներին գրկում ազատ և անկաշկանդ պրոցեսներ կատարելու հնարավորությունը : Լուսկոտի մոտ բացակայում են այդ կրիտիկան, վտանգի կողմնակի մտապատկերները : նրա ուշարությունը, հոգեկան աշխատանքը կենտրոնացած է բացառապես շարժման սֆերայի վրա և այդ պատճառով էլ նա այնպիսի շարժումներ է կատարում, վոր էլ կարող կատարել արթուն ժամանակ :

Ա. Զգայություններից արթնացող յերագներ

Արտաքին աշխարհից յեկող ղգայարանների միջոցով անցնող, ինչպես և ներքին որգաններից (ստամոքս, աղիքներ, միզափամփուշտ, սիրտ և այլն) ստացվող գրգիռները հասնելով գլխուղեղին, յենթարկվում են վորոշ ինդաթյունում և բաղմազան և՛ տարրաբանակ յերագների պատճառ են դառնում : Սրտենք այս կերպ առաջացող մի քանի տիպիկ յերագներն մասին :

1. Յերագի մեջ մարդ թռչում է՝ սենյակում, սոգի մեջ, ծովերի վրայով և այլն : Այս յերագն առաջանում է այն դեպքում, յերբ մարդ քնի մեջ այնպես է պառկած, վոր շատ հեշտ է թեթեվ և շքնչում, կամ մաշկի այն մասի ղգայունակության իջեցմամբ, վոր կողմի վրա պառկած է նա : Հենց գրանով է բացատրվում այն հանգամանքը, վոր հիստերիա հիվանդություն ունեցողները, վորոնց մաշկի ղգայունակությունը շատ է իջեցած, շատ ավելի հաճախ յեն այդպիսի յերագներ տեսնում : Թուշելու յերագի ժամանակ մարդ իրեն ուրախ և աշխուժ է ղգում :

2. Սրան հակառակ վիճակ է տալիս անկման կամ վայր ընկնելու յերագը, վորին ընթացակցվում են վախի եմոցիան և սրտի բարխումը : Հաճախ յերագողը ցնցվում է և արթնանում : Այսպիսի յերագ առաջանում է այն դեպքում, յերբ մարմինը քնի ժամանակ հանդիստ և կանոնավոր վիճակի մեջ է. որինակ քնում ենք մեջքի վրա, վտաքերը ծայած մինչև ծնկները, վորքան խորն ենք

քնում, այնքան թուլանում է վտաքի մկանների ուժը, դժվար է լինում վտաքերը ծայած վիճակի մեջ պահել, վտաքի թաթերը տատնանարար ձգվում, սահում են առաջ, վտաքերը ուղղվում, տալածվում են ներքնակի վրա և ղա պատճառ է դառնում անկման, վայր ընկնելու յերագի :

3. Կեղդուկի յերագի ժամանակ մարդ իր կրծքին մի մեծ ծանրություն է ղգում, կամ նրան թվում է, թե սարսափելի մի հրեշ յերամբողջ ծանրությամբ վրան ընկած՝ ինդղում է իրեն : Քնածը ինդղվում է. սրտի ղարկերը ուժեղանում են, սառը քրաինք և ղալիս վրան, վերջին ուժերը հավաքելով, արթնանում է՝ վրայից մի կողմ ձգելով վերմակը, վորը ծածկել էր նրա քիթն ու ինքանը : Այսպիսի յերագ կարելի յե առաջացնել արհեստականորեն, փակելով քնածի բերանն ու յիթը : Նման յերագ առաջանում է նաև ստամոքսի լիքությունից, վորը շնչաուլթան անկանոնություն է առաջացնում :

4. Յերագը մեջ մարդ էլ կարողանում շարժվել, ման ղալ, վաղել, մարմնի այս կամ այն մասը շարժել. ղա առաջանում է նրանից, յերբ թմբում է մարմնի այս կամ այն մասը, կամ վտաքը վտաքի վրա յե ղրված լինում, ձեռքի մասները մարմնի սակն են և այլն : Յերբ մարմնի այս կամ այն մասը քնած ժամանակ բացվում է և մարմինը մրսում, առաջանում է մեթիկության յերագ, յերագը ղին թվում է, թե ինքը մերկ կամ կիսամերկ է, նախնի հասարակության մեջ : Միգալիամփուշտի լցված լինելը, քնի մեջ քրանելը, քնած ժամանակ պասահարար ջրով թրջվելը պատճառ են դառնում կեղեղ, անձրև, գետեր, ծովեր տեսելու յերագների : Անասկան որգանների գրգռվածությունը, սեռական անբավարարվածությունը պատճառ են դառնում սոռական պատկերներից կաղմված յերագների :

5. Արտաքին բարդ ղգայարանների գրգիռները տալիս են յերագներ, բայց ամենից շատ յերագներ տալիս է տեսական ղգայարանը (յերագների 93% տեսողական բնույթի յե) : աչքը փակ ժամանակն անգամ արտաքին աշխարհից գրգիռներ է ստանում, մասնավանդ յուսանալու ժամանակ, այդ թույլ գրգիռներն առաջացնում են տեսողական պատկերներով յերագներ : Տեսողական յերագի պատճառ կարող են գառնալ նաև մյուս ղգայարանների գրգիռները, այսպես որինակ՝ բերանի մաշկի չորությունն արթնացնում է ոնապատի մտապատկեր, քնած ժամանակ մատերը սառը յեկաթին կաշին արթնացնում է մի յերագ, երբ թե արջը մատից կր



15579-52

պած վերելք և ձգվում, մոռակը կծում և հակառը, թվում և, թե սենյակում կախված լամպը կզալ գլխին: Քամակի տեսակետից յերազնը դասավորվում են այսպես՝ տեսողական, լսողական, շարժիչ, սալա միայն հոտի և համր:

6. Յերազնը կարելի չէ առաջացնել նաև արհեստակցում գրգիռների ոգևորչամբ: Քնածի քթի մաս անուշահոտ սրվակ են դնում, ստաջանում են խանութի և այլ տեսողական յերազնը: Բմբուլով գրգռում են քնածի յերեսը և շրթունքները, նրան թրվում և, թե յերեսին սլառափր են կապել, վորն այժմ դժվարությամբ պոկվում և, հեղ պոկվում և նաև յերեսի կաշին. ալկհոլի, հաշիշի, սպիրտի միջոցով արթնացվում են զանազան տեսակի յերազններ:

Մինչև այժմս ասածներէից կարող ենք յիզրակացնել հետևյալը.—

ա) արտաքին և ներքին զրգիտները պատճառ են դառնում բազմազան յերազնների.

բ) ամեն մի գրգիռ յերազնի մեջ շատ մեծ ձեւափոխության և չենթարկվում.

գ) միևնույն տեսակի զրգիտն արթնացնում և տարբեր տեսակի յերազններ.

դ) մի գրգիռն հաջորդող յերազնի պատկերի առանձնահատկությանը կախված և նախորդ յերազններից:

### բ. Յերազնը ցանկության իրագործումն

Յերազնը առաջանում են վոչ միայն ներքին և արտաքին անմիջական զրգիտներից, այլ և հողեկան կյանքի նախկին փորձի հետևանքով: Նույն որպա կամ նախկին որերի ապրումները հետքեր են թողնում ուղեղի մեջ: Գիշերը քնի մեջ այդ հետքերն ուժեղանում են և յերազններ տալիս, վորոնք իրենց բովանդակությամբ նման են նախկին փորձի ապրումներին. գրանք հիշողանալի բնույթի յերազններ են: Դրանք կարող են առաջանալ ուղեղի ներքին կենտրոնական զրգիտներից, ինչպես և զրաից յեկող գրգիռներից. որինակ՝ զրաից յեկող տեսողական զրգիտն առիթ և գառնում մի վորոչ տեսակի յերազնի արթնացման, այդ յերազնի վորոչ տարրերը վորովհետև աստղեկապիվ կապերով կապված են հագեկան հին փորձի ելեմենտների հետ, արթնացնում են այդ ապրումները, սրանք ևլ սրիչ ապրումներ, և այսպես շարունակաբար, մինչև վոր աստղեկապի մի այլ շղթա յե սկսում գործել:

Բայց յերազնների արթնացման հարցում ավելի մեծ նշանակութուն ունեն մարդկանց ցերեկվա ցանկությունները, իզձերը, իղեպղնեքը: Մարդ յերազնում տեսնում և իր ցանկությունները ճիշտ կեղծով իրագործված, որինակ՝ բանվորը յերազնում և, վոր վեր և կացել, հաղնվել և և զործարան և դնում, անգործ մարդը տեսնում և իրեն այն պաշտոնը կատարելիս, վորը նրա համար տանձնապես ցանկալի յե: Յերեսիան յերազնի մեջ տեսնում և սիրած պտուղներ, խաղալիքներ, ընկերներին և այլն: Այս զեպքերում ուղղակի կերպով մարդու ցանկությունը յերազնի մեջ իրագործված և թվում:

Ավելի հաճախ են պատահում այնպիսի յերազններ, վորոնք խճճված են, տարրերնակ, անմիռ են ըստ յերեկութին, բայց մանրադնին անալիզը ցույց և տալիս, վոր զրանք յեվա ցանկությունների իրագործման արտահայտություններ են: Այս յերեկությունների իրագործման արտահայտություններ են: Այս յերեկությունն ամենից հաջող բացատրում և ՉիԳՄ ՈՒՆԴ ՖԲՈՅԴԷ: Մրա կարծիքով ամեն մի մարդ ունի վոչ միայն պարզ գիտակցությամբ, այլ և թուխ, սղտոր, անորոշ մգումներ ու ցանկություններ, կրքեր ու հանցավոր հակումներ, վորոնց զոյության մասին պարզաբար չունի, կամ աշխատում և ճնշել, անգիտանալ և յենթադիտակցի շրջանը մղել այդ բոլորը: Դրանք ըստ յերեկությունն մոտացված ապրումների ապավորություն են թողնում, բայց քնի ժամանակ սկսում են ներգործել գիտակցության վրա և յերազններ արթնացել, մանավանդ վոր քնի ժամանակ կոնարոլը, ցենզուրան ինտրուցած և յնում: Այդ ցենզուրան, այդ կոնտրոլը, սակայն, ինտրուլին վերացած չի լինում, այդ պատճառով ևլ այս մութ կրքերն ու ցանկությունները մեծ մասամբ իրենց մերկությամբ չեն արթնանում և համարատաստան յերազնական պատկերներ տալիս, այլ գիտակցության համար ընդունելի ձեվեր են ընդունում, թեև խեղաթյուրված, գիմակափորված կերպարանքով: Վոչ միայն նոր, թարմ, այլ և հին մոտացված ցանկությունները յերազն արթնացնելու պատճառ կարող են դառնալ:

Դիմակափորված ցանկություն—յերազնի մի քանի որինակներ.— Մի կին յերազնի մեջ վիճում և մարդու հետ, վոր վորոչ յերեկ վրա մեծ ծախսեր և անում, նրա ամուսինը վորոտրը չեր և նրանք վորաի չներ չունենին: Յերազնը բացատրվում և հետևյալ կերպ. նրա ամուսինն այլ կանոնց վրա շատ ծախսեր եր անում, այդ բանը գուր չեր գալիս կնոջը, քնից առաջ նա մտածել եր, թե ինչքան լավ կլինեք, յեթև իր ամուսինը մի այլ կիրք ունենար,

արինակ՝ թուրք խաղալը, վորսորդութեամբ զբաղվելը և այլն. յերազի ծածկված միտքը հետեւյալն է՝ ցանկալի կլինելը, յեթև նրա ամուսինը փոխանակ այլ կանոնց վրա փող ծախսելու, դրանք վեր վորսով և դրա վրա գումար ծախսելը:

Ս. ՅՐՈՅԴԸ մի անգամ յերազում և, վոր զնայքի մեջ և և ճնկանը գրած ունի թափանցիկ ապակուց շինված մի ստաբիլա, վորը նման է զլիսարիկ. այս յերազը նա բացատրում է հետեւյալ կերպ. յերազի սոպակյա զլիսարիկը նման էր Արեւրի գետը ցանցին, վոր նրան մեծ հարստութեան տվեց: Այդ յերազի սրտահարտութեան և ՅՐՈՅԴԻ ցանկութեան՝ մի գլուխ անել, հարստանալ և ճանապարհորդել:

1920 թ. մի մոակվացի տեսնում է հետեւյալ յերազը. ձեռքին մի խնկական հացի կտոր ունի, կարագ քսած և վրան ապուխտ գրած, այդ բուսերբրոզը նա փաթաթում է վոտքերին. թիում է իրեն, թե ինքը Ղրիմում է գտնվում: Պատճառը նրա վատ անվերջն է, գուրգաններ չունենալն և և այն լուրը, վոր այժմ թիմին Ղրիմում սննդամատակարարումը լավ վիճակի մեջ է:

Յեթե յերազը ցանկութեան իրագործումն է, այն գեպրում ենչպես բացատրել այն յերազը, վոր նույնիսկ ծածուկ ցանկութեան չի կարելի համարել, որինակ՝ սիրածի մահը յերազում: Մի հասուն ազնիկ յերազի մեջ տեսնում է իր քրոջ յերեկային մահացած, առանձին վիշտ չի դրում յերազի մեջ: Այս յերազի իմաստը բացատրվում է հետեւյալ կերպ. իր քրոջ ստաջին յերեկայի մահվան ժամանակ, նրա տանը վերջին անգամ պտտահում է իր սիրած սպամարզուն և հետը գրուցում: Յերազից մի ուրաջ կարգացած է լինում հայտարարութեան այդ նույն սպամարզի տեղի ունենալից դատաստութեան մասին, սիրած մարդուն չուտափութ տեսնելու ցանկութեանն առիթ է դառնում այդ յերազի: Հետաքրքրական է նաև այն, վոր յերազի մեջ գլխապէս տեսնելիս չի տիրում, վորովհետեւ մահը նրա բուն ցանկութեանը չի յեղել, այլ նրա ցանկութեան տարրերինակ գլխակա վորումը:

Նման բնույթի յերազներ յեթե տեսնում են տարբեր մարդիկ, չպետք է նույն հիմունքներով բացատրել, վորովհետեւ տարբեր մարդիկ, տարբեր մտքեր ու ցանկութեաններ ունեն: Չորսր յերազը համարում է քնի պահակը, վորովհետեւ ցանկութեանների ուղղակի կամ ծածկված, գլխակա վորված իրագործումը մեծ մասամբ հանգստացնում է քնոյին: Զանազան գըրդիներ, վոր կարող էլին քնածին անհանգստացնել և արթնաց

նել, յերազի մեջ այսպես կամ այնպես մեղմանում են, վորոչ ընդունելի իմաստ են ստանում և քնի շարունակութեանը հնարավոր դարձնում: Որինակ մեկի վոտքերի մեջը կոմպրես է արված, յերազի մեջ նրան թիում է, վոր ձիով ճանապարհորդում է. այդ պատկերացումը նրան հանդատութեան է տալիս, վորովհետեւ կոմպրեսից ստացվող անդուր զգայութեանը կապվում է ձիով զնալու պատկերացման հետ: Յեթե քնածը անդուր գրգռներ է ստանում, մարմնի դիրքն աննորմալ է, շնչառութեան անկանոն, յերազը նախազուշացնում է նրան և հետո արթնացնում:

գ. Մարգարեական-գուշակոզական յերազներ

Յերազը տարրերինակ բացատրութեանները պատճառ է դարձել մարդկութեան կուլտուրայի նախնական շրջանում: Այժմս էլ վայրի ցեղերը, անկուլտուրական ժողովուրդները տարրերինակ կարծիքներ ունեն յերազի մասին: Նախամարդը զգվար էր տարբերում յերազն իրականութեանից. քնից արթնանալուց հետո, նա հայտնում է, վոր ինքն նոր վերադարձավ ոտար յերկրներից, յերբ նրան համոզում են, վոր նրա մարմինը այդ ժամանակ պառկած էր հանգիստ նույն տեղում, նա այժմ յենթադրում է, վոր նրա անձը յերկու մասից է բաղկացած, մարմնից և ալ, մի անդէտելի ելակից, վոր ժամանակ առ ժամանակ հեռանում է մարմնից և ելի նորից վերադառնում նույն տեղը: Այս մյուս անձը, հոգին, գրուցում է մեռած հոգիների հետ, կարծ ժամանակով փախում է մարմնից (որինակ, յեթե մեկը հարվածից ուշաթափվել է) և ելի վերադառնում է իր բունը: Մահվանից հետո այդ հոգին հեռանում է մարմնից, բայց կարող է նորից վերադառնալ, դրա համար էլ մարմինը չորացնում էլին, մտքը կերակուրներ դնում և այլն: Հոգի գաղափարի առաջացման խնդրում յերազը կարևոր նշանակութեան է ունեցել: Սխուհետեւ համեմատարար ափելի կուլտուրական ժողովուրդներն էլ շեյին ընդունում, վոր քնի ժամանակ հոգին թափառում է, մարմնից հեռանում և ելի նորից այնտեղ վերադառնում, այլ ընդունում էլին (որինակ հույները), վոր հայր սատվածը (Չեվսը) մի հոգի յե ուղարկում քնածի մտա և յերազական տեսիլներով քնածին հայտնում իր ցանկութեանները և նրան նախազուշացնում: Սոկրատես հայտնի փիլիսոփան հավատում էր յերազների աստվածային ծագմանը և այն կարծիքի յեր, վոր յերազը կարող է հիմք դառնալ դանազան գուշակութեանների (սպագան բացա-

արելու) : Հունաստանի մի քանի հայտնի տաճարներում այդուհի-  
այն Հունաստանում մեծ համբավ ունեցող յերազնների մեկնիչ-  
ներ, վորոնք յերազնի հիման վրա գանապան գուշակութուններ  
էլին կատարում, յերազ տեսնողի ապագայի մասին :

Ինչպես բացատրել այն յերազները, վորոնց մասին այն կար-  
ծիքը կա, թե այդ յերազները մեջ լուսաբանվում են դալիք դեպ-  
քերը, այսինքն, յերազի մեջ տեսածներն իրապես կատարվում  
են հետո :

1. Մարդ այդ ապագորությունն է ստանում դեպքերի պա-  
տահական գուգադիպության պատճառով . մարդ յերազի մեջ  
բազմաթիվ անդամ հրդեհ է տեսնում, իրականում հրդեհ չի  
պատահում, այդպիսի յերազները մոտացվում են, բայց մի անգամ  
յերազից հետո իսկապես հրդեհ է պատահում և ահա այդ գա-  
գադիպությունը բախական է, վոր յերազին գուշակողական  
մարդարեական բնույթ վերագրվի : Մենք հաղորարվոր յերազներ  
ենք տեսնում, գարմանալի վոչինչ չկա, յեթե այդպիսի գուգադի-  
պություններ պատահեն, և վորովհետև գուգադիպությունը  
հազվադէպ է պատահում և ուժեղ տղալորություն է թողնում  
յերազ տեսնողի վրա, դրա համար ել այդպիսի դեպքերն ալեւի  
մեծ աշագորություն են գրավում իրենց վրա :

2. Մեկը յերազ է տեսնում, վոր յերկու ասեղ է կուլ տվել,  
վոր հետո կոկորդից դուրս է գալիս, առաջնության քնից վեր կե-  
նարուց հետո, նկատում է, վոր անդինս յե ստացել : Մի ուրիշը  
յերազի մեջ տեսնում է, վոր իր վոտքը քարացել է, անկենդան է  
դարձել, կարճ ժամանակից հետո վոտքի կաթված է ստանում :  
Շատերը կկարծեն, վոր այդ մարդիկ իսկապես յերազի մեջ տե-  
սել են դալիք դեպքերը, բայց այդ փաստերը բացատրվում են  
այլ կերպ : Այդ մարդկանց հիվանդությունը սկսած է յեղել յե-  
րազ տեսնելուց առաջ, բայց արթուն ժամանակ, հիվանդության  
պատճառած զգայության թուրության պատճառով, չեն նկատել  
իրենց մեջ տեղի ունեցող փոփոխությունները, բայց քնի ժամա-  
նակ այդ զգայության ուժը սաստկանում է, ալեւի նկատելի յե  
գառնում և յերազի առաջացման պատճառ դառնում : Ուրեմն,  
վորոչ տեսակի, այսպես կոչված, արագան գուշակող յերազնե-  
րի առաջացման պատճառն արգանիզից յեկող քույլ զգայու-  
թյուններն են դառնում :

3. Շատերը քնի մեջ հայտնագործություններ են կատարում .  
վորոչ մատեմատիկոսներ, բնախոսներ, քիմիկոսներ և այլն :

յերազի մեջ գյուտեր են կատարել, նորություններ հայտնադը-  
ծել : Իտալացի կոմպոզիտոր Տարախենն ջութակի համար մի սո-  
նատ է գրում, բայց վերջին մասը չի կարողանում հաջող հեղի-  
նակել, նա յերազում տեսնում է սատանային, վորն ասում է  
նրան, վոր սոնատի վերջաբանն ինքը կնվազի ջութակի վրա,  
յեթե միայն կոմպոզիտորը իր հոգին կծախի սատանային, նա  
համաձայնում է, սատանան նվազում է անմահ : Կոմպոզի-  
տորը իսկույն արթնանում է և ձայնադրում սատանայի նվագա-  
տորը : Սոնատը հրաշալի կերպով ամբողջանում է : Ինչպես բա-  
ցատրել այս յերեւոյթները . արթուն ժամանակ մեր միտքն ուժեղ  
դրազված է լինում մի հարցով . դիչերը, քնի ժամանակ չի դա-  
դարում ուղեղի նույն ուղղությամբ աշխատանքը, այլ շարու-  
նակվում է և ինդիքը յենթագիտակից մշակման է յենթարկվում,  
և վորովհետև այլ խանդարող առիթներ չկան, լուծվում է հար-  
ցը : Սա ցերեկվա մտալոր աշխատանքի տրամաբանական վախճանն  
է կազմում :

Նույնը պատահում է նաև արթուն ժամանակ . մի հարցի մա-  
սին յերկար մտածել ենք, մի վճռի չենք յեկել, մոտացել ենք այդ  
հարցը, ել նրա մասին չենք մտածում, այլ ինդիքներով ենք  
դրազված, հանկարծ, անսպասելի կերպով, մեր մտքի մեջ լու-  
սարանվում է հին հարցը : Նույն կերպ են բացատրվում նաև այն  
դեպքերը, յերբ յերազի մեջ հիշում ենք մոտացված դեպքերը և  
դանում կորցրածները, պարզում խոռոխած հաշիվները և այլն :

Վորոչ դեպքերի հավանական զարգացման մասին կազմած  
մեր կարծիքն առիթ է դառնում այդ դեպքերի գալիք գարուց-  
ման մասին ճիշտ յերազ տեսնելու . շատերը յերազում տեսել  
էին համաշխարհային պատերազմի փաստը, պատերազմն սկը-  
վելուց առաջ . գարմանալի վոչինչ չկա, վորովհետև պատերազ-  
մից առաջ այդ մասին մշտապես խոսվում և գրվում էր : Ճիշտ է  
ասում Ս. Յրոյդը . «Յերազի մեջ արտահայտվում է վոչ թե այն  
ապագան, վոր մոտենում է, գալիս է, այլ այն, վորի դալը մենք  
պահանում ենք» : Այս բոլորը մեղ քերում է այն յեղրակացու-  
ցանկանում ենք» : Այս բոլորը մեղ քերում է այն յեղրակացու-  
թյան, վոր յերազը տարրիմակ արտակարգ յերեւոյթ չէ, այլ  
մի վորոչ առանձնահատկություն ունեցող հոգեկան սովորական  
յերեւոյթ, վոր պետք է ուսումնասիրվի հոգեբանության հիմ-  
նական սկզբունքների համաձայն :

Հ Ի Պ Ն Ո Ջ

1. Ներշնչումն (սուղեացիա)

Նախ քան բուն հիպնոզի մասին խոսելը, պետք է յուսարանել ներշնչման յերեվույթը, վորովհետև սրանք իրար նման են շատ կողմերով. ներշնչումն արթուն ժամանակվա հիպնոզն է, իսկ հիպնոզն արհեստական քնի ժամանակ տեղի ունեցող ներշնչումն է:

Ներշնչումն ասելիս հասկանում ենք այն վիճակը, յերբ մեկը, կամ շատ մարդիկ ուրիշի կամ ուրիշների մեջ արթնացնում են հստակ մի վորեն գրություն կամ բովանդակություն, վորն այդ ուրիշը կամ ուրիշները ընդունում են առանց նորմալ չափով ու ձևով քննադատելու: Ներշնչել կարելի յե հոգեկան ամեն տեսակ բովանդակություն՝ մտքեր, զգացմունքներ, տրամադրություններ, հոգսեր, վարմունքի ձևեր և այլն:

Այս կերպ կարելի յե ազդել նաև Ֆիզիոլոգիական պրոցեսներին վրա, բժշկի յերեվույթը, նրա խոսելն ու վարվեցողությունը հաճախ պատճառ է դառնում, վոր հիվանդը, զոնե առ ժամանակ, մոռանա իր ցավերը: Կարելի յե ներշնչմամբ ազդել նաև մարդու շարժումների վրա, որինակ մեկին ասվում է. կրոնես ձեռքս և ել չես կարող բաց թողնել: Այդպես ել լինում է: Մի ուրիշին ասվում է. հաշվելով կըայլես գեպի ինձ, յերբ կասե՞՞ կանգնի՞ր, կմեխի՞վես տեղդ: Այդպես ել լինում է: Յեվ այս բոլորը տեղի յե ունենում արթուն ժամանակ. նշանակում է, արթուն ժամանակ ևս մարդու մեջ կարելի յե հիպնոտիկ փոփոխություններ առաջացնել:

Մարդիկ իրար ներշնչում են կամովին, ծրագրով, գիտակցաբար, ինչպես և առանց ցանկության և ծրագրի:

Ներշնչման առանձնահատկությունն այն է, վոր մի միտք, մի ծրագիր, մի կիրք տիրապետում է մարդուն, վորից ազատվել չի կարող, քննադատությունը, բանական հիմունքներն անուժ են, այդ բովանդակությունը զբաղում է նրա ուշադրությունն իր վրա, վորովհետև կապված է զգացմունքի հետ, զգացմունքի հետ կապված այդ բովանդակությունը նեղացնում է մեր գիտակցությունը, թույլ չի աայիս, վոր այլ մտքեր արթնանան:

Մարդ կարող է ինքն իրեն ներշնչել մի վորեն հոգեկան վիճակ, մի միտք, այդ վիճակն ինքնաներշնչումն է կոչվում: Մտքի այդ տիրապետությունը յերբեմն այնպիսի ուժի կարող է հասնել, վոր անքնություն առաջացնի, վաս ներդործի նյարդային, մարտություն, արյան շրջանառության սխտեմները վրա:

Սիրո, հնազանդության, դարձանալու, զզվելու, դայրանալու և այլ տիպի զգացմունքների արթնացման գործում ահագին դեր ունի յենթադիտակից ներշնչման մոմենտը: Ներշնչող է ազդում և սեղանը, դարդարված ցուցափեղկը, գոյասանքը, որինակը, հասարակական մտքի ղեկավարը, ճարտասանը, դեղարվեստագետը և այլն: Հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում կարելիոր դեր է խաղում ներշնչումը: Կրթական գործի մեջ առանձին արժեք ունի այս մոմենտը. ծնողների, մեծերի որինակը, խոսքը, կենսաձևը, գիտակից կամ անգիտակից կերպով, նոր սերնդի մեջ նորանոր սովորություններ ու վարվելակերպ են մշակում:

Մասնայական հուզումից դուրս դոմիոլ անհատը քննադատում, մերժում կամ ընդունում է արամարանական հիմունքներով այս կամ այն յերեվույթի ոգտակարությունը կամ վնասակարությունը: Մասնայական հուզմունքի ժամանակ հաճախ անհայտանում է նրա քննադատական ընդունակությունը, նա լուծվում է, մերժում է մասնայական հոգեբանության մեջ, անում այն, ինչ մասսան է անում, մոռանում է նույնիսկ իր բնական վախկոտությունը, հաճախ այնպիսի արարքներ է թույլ տալիս, վորն անկարող էր կատարել ջոկ, մասսայի ազդեցությունից անկախ: Մասնայական այս ներշնչումը կրկնապատկում է մասնակից անդամների հոգեֆիզիկական ուժերը: Ամեն մի իդեայով, ամեն մի գործելակերպով չի ներշնչվի մասսան, այստեղ հանդես են գալիս դասակարգային պատկանելիությունը, շահերն ու հեռանկարները. այն, ինչ իր չուրջն է դրավում կառիտալիսաներին չի կարող գրավել բանվորական մասսային և ընդհակառակն: Մասսայի անդամների նյութական վիճակի, մտավոր և բարոյական ըմբռնումների մեջ միատեսակության մի վորոշ միևնմամբ սեռք է լինի, վորոյես մեջ միատեսակության մի վորոշ միևնմամբ սեռք է լինի, վորոյես մի այդ մասսան ներշնչվի մի վորոշ գրությամբ և մի վորոշ գործի կատարի, այդ պատճառով ել արհեստական կերպով մասսաներ հուզելն անհնար է դառնում, մանավանդ հասարակական խեղդիչներում, ուր թեկադրող է հանդիսանում անտեսասոցիալական գործունը:

11. Հիպնոտիկ վիճակ

Հիպնոզված մարդը նստած կամ պառկած է լինում, փակ են նրա աչքերը, չի նկատում կամ ունակ է չի կատարում շուրջ կատարվող իրողութունների հանդեպ, առանց արտաքին առիթի կամ ուժի շարժումներ չի կատարում, իր արտաքին սպախորությամբ շատ նման է քնած մարդու. հիպնոզ բառը հունարեն նշանակում է «քուն» :

Մտրդ հիպնոտիկ աշղպիսի վիճակի մեջ է ընկնում մի ուրիշ մարդու աղբյուրությամբ, վերը միտքինակ ձեռնով շփելով նրա մարմնի վորոշ մասը, միտքինակ ձայնային սպախորություններ տալով, կամ փայլուն առարկաներ ցույց տալով, կամ փորձի յենթակա անձի աչքերի մեջ շեշտակի նայելով, նրան դանազան հրամաններ է տալիս բառերով, կամ նկարագրում է, թե ինչ վիճակի մեջ պետք է նա ընկնի, վորից հետո փորձի յենթակա մարդն ընկնում է այն վիճակի մեջ, վորի նկարագրի վերևը սրվել է :

Հիպնոզվածն ամբողջովին ներշնչված է հիպնոզողից, նրա կամակատարն է, ինչ կարգադրում է հիպնոզողը, հիպնոզվածը կատարում է առանց ընդդիմության : Հիպնոզողը կարող է բազմաանասակ արարքներ և հոգեկան բովանդակություններ արթնացնել հիպնոզվածի մեջ, ներշնչել նրան իր ցանկությունները :

III. Հիպնոզի ազդեցությունը մարդու բնախանգանի և հոգեկանի վրա.

1. Հիպնոզը բավական հեշտ է ներդրում մարդու մտաբանական (շարժողական) սփերայի վրա : Հիպնոզողը հիպնոզվածի ձեռքը, վոտքը կամ մարմնի մի մասը մի վորոշ վիճակի մեջ է դնում և ասում է նրան, թե այդ մասը (որինակ ձեռքը) պետք է անշարժ մնա այդ վիճակի մեջ : Իսկապես ձեռքը մնում է անշարժ, քարացած այդ վիճակի մեջ : Կարելի չէ ամբողջ մարմինն աշղպես քարացնել, գլուխը հենել մի տախտակի վրա, իսկ վոտքերի թափելով մի այլ տախտակի, մարմինն աշղպես յերկար ժամանակ կմնա ուղու մեջ ձգված, իբրև մի գերան : Այդ կերպ անողա կարելի չէ դարձնել մարմնի այս կամ այն մասը, չի կարելի հիպնոզի յենթարկել միմիայն մի մկան, այլ միայն մկանային մի ամբողջ կապակցված խումբ : Յեթե ուղում ենք հիպնոզվածի վեր բարձրացած ձեռքը ծալել, շատ մեծ ուժ է հարկավոր գործադրել. ծալելուց հետո, յեթև բաց ենք թողնում ձեռքը, էլի նախկին վիճակի մեջ է ընկնում : Մկանների այս լարված վիճակը բավական յերկար է տևում, քան արթուն ժամանակ : Պարզված չէ, թե հիպնոզի ժամանակ արդյո՞ւ

մկանների ուժի համեմատ է կատարվում, թե՞ այդ վիճակի ժամանակ հոգնածության յերևույթն է շատ ուշ արտահայտվում, վորի պատճառով էլ մկանները յերկար ժամանակ են լարված մնում : Համանորեն հոգնածության ուշանալն է պատճառ մկանների այս յերկարատև լարվածության : Մկանների այս լարվածությունը կոչվում է հիպնոտիկ կատալեպսիա :

Կարելի չէ հիպնոզել վորոշ ուրիշ յարժուներ անել, որինակ՝ ծիծաղել, հորանջել, ձեռքի թափերն իրար քսել, մատերը ծալել և այլն, և հիպնոզվածը անողապար կրկնում է այդ յարժումները, մինչև վոր հիպնոզողը կարգադրում է դադարեցնել. այս յերևույթը կոչվում է հիպնոտիկ ավտոմատիզմ :

Հիպնոզի ժամանակ կարելի չէ կարգադրել, վոր հիպնոզվածը ձեռքը շարժել, բաց բերանը փակել չկարողանա : Այդպես էլ լինում է : Այս դեպքում ժամանակավոր պարալիչի յեն յենթարկվում մկանային վորոշ խմբեր, մկաններ չեն յենթարկվում անատմիական հիպնոզողին փոփոխությունների, սա ավելի հոգեբանական յերևույթ է, աղբյուր է ուղեղի այն մասը, վորը ղեկավարում է մկանների այդ խմբի ֆունկցիաները, ինչպես նման յերևույթ նրկատվում է հետտերիկ սրբալիչի ժամանակ փախից, ցնցոց, անբախտ ղեկաբերից և այլն :

2. Հիպնոզի միջոցով կարելի չէ աղբել մարդու բոլոր զգայաբանների գործունեության վրա : Հիպնոզի ժամանակ մարդու բոլոր գայնունակությունը մասամբ թուլանում է, ինչպես քնի ժամանակ բաց հատուկ ներշնչման միջոցով կարելի չէ ուժեղացնել կամ թուլացնել այս կամ այն զգայարանի նործունեությունը : Մաշկի բոլոր գայարանի վրա ազդելու համար պետք է հիպնոզվածին ավելի խորը հիպնոտիկ վիճակի մեջ ձգել, ապա ձեռքը քսել, որինակ նրա ղեմքի աջ մասին և ասել, վոր աստիճանաբար վոջնջանում է ցավի, ցրտի, տաքի և շոշափման զգայնությունները : Գրանից հետո, յեթև ասեղով ծակենք նրա ղեմքի աջ մասի, նույնիակ ամենանուրբ տեղը, նա ցավ չի ողբա, ձայն մասը ծակելիս, զգում է : Այս կերպ կարելի չէ ամբողջ մարմինը անողա դարձնել :

Մարմինն այս կերպ անողա դանախով զգայնությունների համար, բաց նրա այս կամ այն մասի, որինակ վորի մկանների, ունիթեք շարժումները մնում են : Նշանակում է, վոր մաշկն իր սովորական ֆիզիոլոգիական պրոցեսները կատարում է, զգացող նյարդերը գործում են, զրգիտները հասցնում են ուղեղի համապատասխան կենտրոնին, բաց այս կենտրոնն է վոր ներշնչմամբ տոր-

մողի յե յեթարկվել և այլ գրգիռներ չի համարում ցավ, չուս  
իմունք, տաքութուն, կամ ցրտութուն առաջացնող գրգիռներ

Հիպնոզի միջոցով կարելի յե բարձրացնել մաշկի զգայուն  
թյունը, ավելի թույլ գրգիռներն անդամ զգայությունն են տալիս

Նույն կերպ կարելի յե վերացնել, թուլացնել և ուժեղացնել  
աչքի, ականջի, քթի, և ճաշակելիքի սրճանների զգայական գոր  
ծունեությունը: Այս վիճակի մեջ չնչին սպալորութուններ  
ըմբռնելու և նրանց նրբին տարբերությունները զգալու տեսակի  
տից, վորոչ տիպի հիպնոզիսները դարմանք են պատճառում:

Զգայարանների գործունեությունը չեղաքայցնել հիպնոզի ժա  
մանակ, այդ դեռ չի նշանակում, թե ռեցեպտորները չեն գործու  
և գրգիռ չեն անցկացնում, այլ այն, վոր այն մեխանիզմները, վո  
րոնց սղնոթյամբ գրգիռը վերամշակվելով, նկատելի հողեկան յե  
րևվույթ ե արթնացնում, ներշնչման միջոցով ժամանակավորապես  
տորմողի յեն յենթարկվել: Հետաքրքրականն այն ե, վոր հոգեկան  
կյանքի վորոչ կողմի գործունեություն մեկուսացումն ամբողջովի  
կախված ե հիպնոզից և նրա կարգադրութուններից:

3. Հիպնոզի ժամանակ կարելի յե հիպնոզվածի մեջ արթնաց  
նել իլլյուզիաներ— նրան սովում ե, վոր իր առաջ յեղած մարդը  
պողեր ունի, կամ կարմիր միրուք— նա այդպես ել տեսնում ե  
սովում ե, վոր այս ինչ կարմիր առարկան անդուն ե, այնպես ել  
տեսնում ե: կարելի յե արթնացնել նաև հալյուզինացիաներ. սո  
վում ե. յեղբայրդ յեկավ, տեսնում ե յեղբորը, ասում են, այստե  
մի շուն կա, շոյիր շանը, նա կատարում ե համապատասխան շար  
ժումներ: կարելի յե հիպնոզել այնպես, վոր շտենի իր շրջապակ  
իբերը, մարդկանց (բացասական հալյուցինացիա): կարելի յե ներ  
լանի մեջ, գնացքում և այլն: Հալյուցինացիաները դլսավորապես  
տեսողական կարգի յեն լինում, բայց կարելի յե նաև արթնացնել  
մյուս զգայարաններին վերաբերող հալյուցինացիաներ:

4. Հիպնոզի ժամանակ կարելի յե աղբել հիպնոզվածի հիշողու  
թյան վրա— նրա մեջ արթնացնելով այնպիսի անցյալի ապրումներ,  
վորոնք բոլորովին մոռացված եյին արթնության ժամանակ: Մո  
ռացվածներին նորից վերարտադրելը կոչվում ե հիպնոզիսի  
Մեկը, վորը մի շաբաթ հիվանդ լինելու պատճառով, մոռացել էր  
բոլորովին այդ շաբաթվա իր ապրումները, հիպնոզի ժամանակ  
պատմում ե անցած-դարձածը: Հիպնոզը անցնելուց հետո, նորից  
մոռանում ե ամեն բան: Հիվանդության պատճառով վորոչ հմտու  
թյուններ մոռացվում են, հիպնոզի միջոցով կարելի յե այլ մոռաց

վածներն աստիճանաբար գիտակցելի դարձնել և հին հմտությունը  
նորից ձեռք բերել: Հիպնոզի ժամանակ հիշողության գործունեյու  
թյունը մեծանում ե, բայց արթնանալուց հետո չի նկատվում, թե  
հիշողության կարողության ուժը բարձրացել ե:

5. Հիպնոզի ժամանակ հնարավոր ե աղբել նաև հիպնոզվածի  
յեսի վրա: կարելի յե նրա յեսին տալ նոր գծեր, ձեւափոխել, նույ  
նիսկ կերպարանափոխել: կարելի յե ներշնչել, վոր նա հայր ե,  
հարուստ կամ աղքատ մարդ ե, պետական մեծ գործիչ ե, պառավ ե  
կամ մանուկ, և ներշնչվածն այնպիսի վարմունքներ ե ցույց տա  
լիս, վոր համապատասխանում են ներշնչված անձի վարմունքնե  
րին: կարելի յե ներշնչել պանդան տեսակ զգացմունքներ, տրա  
մադրութուններ և այլն: Հիպնոզվածի յեսի վրա աղբելը վորոչ  
սահմաններ ունի, ներշնչումը կարող ե վորոչ արգելքների հանդի  
պել, հետեւանք չտալ, յեթե ներշնչման բովանդակությունը վի  
րավորում ե հիպնոզվածի ինքնասիրությունը, պատիվը, ինքնա  
հարգանքի և արժանապատվության զգացմունքները: Չի կարելի  
ամեն դեպքում աղբել նրա կամքի վրա և անել տալ այն, ինչ ցան  
կանում ե հիպնոզողը:

6. Հիպնոզը ստանձնապես չի ազդում ներքին օրգանների՝  
սրտի, թոքերի, գեղձերի և այլն, գործունեյության վրա: Հիպնո  
զի ժամանակ այդ օրգանների գործունեյության վրա նկատելի կա  
րելի յե աղբել, յեթե հիպնոզվածին ներշնչում են՝ վախ, գայ  
րույթ, ուրախութուն և այլ ուժեղ աֆֆեկցիաներ: Այդ դեպքերում  
հիշյալ օրգանների գործունեյությունը թուլանում կամ ուժե  
ղանում ե:

#### IV. Հիպնոզին հաջարդով վիճակը

1. Հիպնոզից արթնանալը շատ նման ե քնից արթնանալուն,  
արթնացողը նայում ե շրջապատին, աստիճանաբար կամ շատ արագ  
կողմնորոշվում ե շրջապատի մեջ և դառնում նախկին մարդը:  
Ինչպես ել յենթադրում են, թե քնից են արթնացել, վոմանք դե  
տեն, թե հիպնոզի ժամանակ ինչ ե կատարվել իրենց շուրջը, վո  
մանք շատ խալար հիշողություն ունեն, իսկ ուրիշները բոլորովին  
վոչինչ չեն հիշում: Այս յերևույթը կապ ունի հիպնոտական քնի  
խորությունից: Շարկոն և Ֆորելը հիպնոտիկ քնի խորության 3  
աստիճան են ընդունում. ա) քնեմոնոթյան աստիճան, այս աստի  
ճանն աչքի յե ընկնում բարձր ներշնչականությամբ, բայց հիպնոզ  
վածը պահպանում ե հիշողությունը. բ) միջին աստիճան. հեշտու  
թյամբ առաջ ե բերվում կատարելաբար, անեստեզիա և զգայական

պատրանքներ: Յեղածի մասին հիշողութիւնը շատ խաւար է, բայց բոլորովին վերացված չէ. դ) յերրորդ աստիճան. շատ խորը քուն, հիպնոզիածն արթնանալուց հետո յեղածի մասին վոչ մի հիշողութիւն չունի: Հիպնոզի այս աստիճաններն իրարից տարբերվում են գիտակցութեան, ծավալի նեղութեամբ. յերրորդ աստիճանի հիպնոզի ժամանակ գիտակցութիւնը արտակարգ չափերով նեղացած է: Յեթն նույն անձին նորից են հիպնոզի յենթարկում, հիշում է այն բոլորն, ինչ կատարվել է առաջին հիպնոզի ժամանակ: Նշանակում է ուղեղի մեջ հետքեր են մնացել, բայց արթուն ժամանակ այդ հետքերը հնարավորութիւն չունեն ուժեղանալու և հիշողութիւն տալու:

Հիշել-չհիշելու և հիպնոտիկ վիճակների յուրատեսակութիւնների խնդրում մեծ դեր ունի նաև հիպնոզվողի անձնավորութիւնը. վրամանք հեշտ են ներշնչվում, ուրիշները՝ դժվար, վրամանք զգայական պատրանքների հեշտ են յենթարկվում, ուրիշները՝ դժվար, վրամանք հիպնոզի ժամանակ արված հրամանները արթնանալուց հետո կատարում են, ուրիշները չեն կատարում և այլն:

2. Հիպնոզի ազդեցութիւնը չի վոչնչանում արքնանալուց հետո. յեթե նույն մարդուն հիպնոզի ժամանակ ասվում է, թե հիպնոզից հետո քեզ թարմ և լավ կզգաս, նա այդպես էլ զգում է, յեթե ասվում է, վոր թառամած, հոգնած կզգաս, հոգնած է ըզգում: Նկատված է, վոր հիպնոզի ժամանակ ներշնչված բովանդակութիւնները տենդենց են ցույց տալիս մնալու, ազդելու նաև հիպնոզից հետո, նայած հիպնոզի մի անձնավորութեան և ներշնչման բովանդակութեան: Որինակ՝ հիպնոզի ժամանակ մի քանի անձնավորութիւններին կարգադրվում է, վոր արթնանալուց 7 բույե հետո պետք է մոտենան ջրի շին, մի բաժակ ջուր ածեն և խրմեն իրբև կարմիր գինի, վրամանք ճիշտ այդպես էլ անում են առանց դժվարանալու: Ուրիշները տատանվում, չարչարվում են, կարծես չեն ուզում կատարել, բայց վերջն էլ կատարում են հրամանը: Վրամանք էլ տանջվում են, իրենք իրենց դեմ պայքարում են, վերջը հրամանը չեն կատարում: Յե՛րբ չի կատարվում հրամանը. յեթե այդ հրամանի բովանդակութիւնը խիստ անդուր է, ծիծաղելի յե դարձնում, վիրավորում է հիպնոզի մի բարոյական զգացմունքները և նրա ինքնասիրութիւնը:

Հիպնոզի ժամանակ չի կարելի այնպես ազդել, վոր հիպնոզը վերջանալուց հետո մեծանան հիպնոզի մտավոր ընդունակութիւնները, բայց կարելի յե ներքին հանդատութիւն, կենտրոնացումն առաջացնել նրա մեջ, հավաստ արթնացնել դեպի իր ուժերը,

մի հանգամանքը, վորն ուղղակի ազդում է նաև մտավոր աշխատանքի վրա:

3. Հիպնոզի ազդեցութեան տեղափոխութիւնը շատ մեծ չէ. մի քանի ժամից կամ որբերից հետո վերանում է այդ ազդեցութիւնը. մի բան ուժեղ տպավորելու համար կարիք է զգացվում էլի մի քանի անգամ հիպնոզել և նույն բովանդակութիւնը էլի ներշնչել, այս դեպքում ազդեցութիւնն ավելի յերկար է մնում:

4. Հիպնոզից հետո հիպնոզվածը սրամաղիթ է հեշտութեամբ և հիպնոզի մեջ յեղել: Այս դեպքում կարիք չկա այն միջոցներին դիմելու, վորտեղ ոգնութեամբ անհատին հիպնոզի յենք յենթարկում առաջին անգամ. շատ անգամ բավական է ասել. «քնիր» և նա ընկնում է հիպնոզի մեջ: Կամ հիպնոզի ժամանակ հիպնոզվածին ասվում է, թե հիպնոզն անցնելուց հետո՝ նրա հետ կզուրցի հիպնոզողը և յերբ կասի «ծխախոտ» բառը, նա նորից քնում է: Մեկին հիպնոզի ժամանակ կարգադրվել էր, վոր արթնանալուց հետո հիպնոզի ժամանակ կարգադրվել էր, վոր արթնանալուց հետո պետք է սենյակի դուռը կողալի, նա իսկապես ուզում է կողալ, հիպնոզողն այդ ժամանակ ազդեցիկ տոնով ասում է. — յերբ յետ կասեմ մեկ, յերի՛ւ, յերե՛ք, դուք կանգ կառնեք. այդպես էլ լինում է: Գրանից հետո ասում է. — հաշվեցեք տասից մինչև քսանը, յերբ ձեռքս բարձրացնեմ, դուք կթմբեք: Յերբ փորձի յենթարկան հաշվում է մինչև 16, հիպնոզողը ձեռքը բարձրացնում է, նա իսկույն թմբում է և նորից ընկնում հիպնոզի մեջ: Այս յերևույթը անուղղակի հիպնոզ է կոչվում:

#### V. Հիպնոզի բացատրութիւնը

Հիպնոզով առաջին անգամ զբաղվել է Մեմբերը (1743—1815) վեննայում և Փարիզում և մեծ ժողովրդականութիւն ձեռք բերել<sup>\*)</sup>. նա կարծում էր, թե գտել է մինչև այժմ բնութեան մի անհայտ ուժ, վորին «կենդանական մագնետիզմ» անվանեց: Նա հավատացած էր, վոր այդ ուժը կարելի յե ողտադործել բժշկութեան մեջ: Մեմբերից հետո շատերը հիպնոտիզմի հետ կապել են բազմաթիվ միատիկական մտքեր՝ յենթադրելով, թե հիպնոտիզմի ժամանակ անդրբնական, դերբնական ուժեր են հանդես գալիս: 19-րդ և 20-րդ դարերի լուրջ ուսումնասիրութիւնները ցույց են

\*) Ըստ յերեվույթին հին դարում ևս հայտնի յե հիպնոտիզմի փատր:

տալիս, վոր հիպնոտիզմը պետք է բացատրել այն կերպ, այն ըս-  
կզբունքների համաձայն, վորոնցով բացատրվում է հոգեֆիզիկա-  
կան ամբողջ կյանքը: Հիպնոտիկ վիճակը մի բոլորովին ուրույն  
վիճակ չէ, այլ հոգեֆիզիկական կյանքի արտահայտման մի այլ  
ձևը:

Այս յերևույթին բնագիտական տեսակետից մոտենալու առա-  
ջին փորձն է կատարում անգլիացի բժիշկ Բրեդը. նա յենթադրում  
էր, վոր ուղեղի վորոշ մասերի բջիջները հիպնոզի ժամանակ կեր-  
պարանոսիոսվում են, և ուղում եր գտնել այդ տեղերը: Այս փոր-  
ձը անհաջողութան մատնվեց: Ավելի հավանական բացատրու-  
թյուն է տալիս Ֆրանսիացի հայտնի նեվրոպատոլոգ Ծարկոն,  
վորի կարծիքով հիպնոտիկ վիճակի պատճառը նյարդային և մկա-  
նային սխտեմների լարվածության իջեցումն է:

Վերջին ժամանակի ուսումնասիրությունները պարզում են  
հետևյալը.—

1. Հիպնոզը նախ իսկական իմաստով բուն չէ, թեև իր արտա-  
քին նշաններով նման է քնի, այլ քնից տարբերվող մի վիճակ է:  
Հիպնոզը չի առաջանում բնականորեն, ինքն իրեն, ինչպես քունը,  
այլ մի ուրիշ անձի հրամանի կամ ձեռք տալով այլ միջոցների հե-  
տևանքով: Հիպնոզողի և հիպնոզվածի մեջ հոգեկան մի կապ գա-  
յալքյուն ունի, վորով հիպնոզն ավելի դալուստն կերպով տարբեր-  
վում է քնից: Յեթե յերկուսի մեջ գոյություն ունեցող այդ կապը  
կտրվում է, վերանում է հիպնոզը և նրան հաջորդում է սովորական  
քունը: Քնի ժամանակ (անյերազ) դադարում է գիտակցության  
գործունեյությունը, այն ինչ հիպնոզի ժամանակ գործում է դի-  
տակցությունը հատուկ ուժգնությամբ, թեև նեղ զգված սահման-  
ների մեջ, դրա համար ել հայտնի ֆիզիոլոգ Վ. Յերվորնի կարծի-  
քով հիպնոզը «մարդու ուղեղի ցայտուն արթուն վիճակն է»:

2. Հիպնոզն ավելի նման է յերազի, յերկու դեպքում ել կա  
գիտակցություն, յերկուսն ել մասնակի արթնության վիճակն են,  
յերկու դեպքում ել ուղեղի չգործող մասերը սովորովի յեն յեն-  
թարկված: Բայց և այնպես ելի տարբերվում են իրարից. յերազի  
մեջ չկա հրամայող, կարգադրող, ղեկավար, այն, ինչ էյակյան  
պայման է հիպնոզի համար, յերազի մտապատկերներն ուրիշի հրա-  
մանով չեն արթնանում: Յերազի մեջ յերազողն իրեն անկաշ-  
կանոյ, ազատ է գգում, մտքերը ուրազությամբ քննադատ թափա-  
սումներ են ստարում զստպան ուղղությամբ, այն ինչ հիպնոզի  
մեջ գիտակցության մի վորոշ բաժինն է աշխատում, այն ել հիպ-

նոզողի ցանկացած ձեւով: Մի տեղ կա ներքին ազատություն,  
մյուս տեղն արտաքին հարկադրանք:

3. Ինչպես տեսանք, հիպնոզն առաջանում է մոնոտոն (մի որի-  
նակ) տպալարություններից, վորոնք շղթայում են հիպնոզվողի  
ուշադրությունը, կամքը, միացնում են հոգեկան մյուս բովանդա-  
կությունները, արգելում են ասոցիացիաների նորմալ գործու-  
նեյությունը, իսկ հայտնի յե, վոր միտքնակ տպալարությունները  
միշտ քնքառություն են առաջացնում և հեշտ ներշնչվելու տրամադ-  
րություն: Եյակյանն այդ գրգիռները զգայական տպալարություն-  
ներն չեն, այլ այն նշանակությունը, վոր հիպնոզվողը տալիս է այդ  
գրգիռներին: Ներշնչվողն ինքն սպասում է, վոր պետք է հիպնոզվի  
այդ գրգիռներից ու հրամաններից և վորքան նա ավելի մեծ հա-  
վատ ունի դեպի հիպնոզողը և նրա տված գրգիռները, այնքան  
ավելի հեշտ է հիպնոզվում. չհավատացողը, կասկածողը, կամո-  
ւթին ընդդիմանալ ցանկացողն ավելի դժվարութամբ է հիպնոզվում  
կամ բոլորովին ել չի հիպնոզվում:

Հիպնոտիկ դրաքյունը ստեղծվում է ներշնչման շնորհիվ  
դրա համար ել Ֆերվորնի կարծիքով «հիպնոզի էյությունը մեծ  
ներշնչականության մեջ է դրված»: Արթուն ժամանակվա ներշնչ-  
չումից տարբերվում է նրանով, վոր հիպնոզի դեպքում ավելի  
ցայտուն, ուժեղ է արտահայտվում ներշնչման փաստը, ուրեմն  
ներշնչման հոգեբանական մոմենտը հսկայական դեր ունի հիպնո-  
զի ժամանակ:

4. Իսկ ինչ դրություն է առաջացնում ներշնչման փաստը հիպ-  
նոզվածի գիտակցության մեջ:

Հիպնոտիկ վիճակը նման է գիտակցության այն փոփոխու-  
թյանը, վոր արեվելյան կրոնների, մանավանդ բուդդայականու-  
թյան մեջ, անեյուրքյան մեջ խորատուգլխի և կոչվում: Բուդդա-  
յականը կտրվում է շրջապատից, ամբողջ ուշադրությունը կենսա-  
բոնացնում է մի իդեալի վրա, վորի գերիշխանության տակ է հո-  
գեկան վողջ կյանքը, այլ կողմնակի խանդարող մտքեր չեն արթ-  
նանում, նա անդիտանում է շրջապատը, մոռանում է նույնիակ իր  
սեփական մարմնի գոյությունը, գիտակցության ծավալը նեղա-  
նում է, մի իդեա է մնում, վորը գիտակցվում է արտակարգ սյալ-  
ծառությամբ:

Հիպնոզի ժամանակ յեյա գիտակցության ծավալն արտակարգ  
չափերով նեղացած-փոքրացած է: Այս դեպքում գիտակցության  
վրա գերիշխում է վոշ թե այն, ինչ հիպնոզվածն է ցանկանում,

այլ այն, ինչ ներշնչել է հիպնոզը: Գիտակցութեան գրազման առարկան ուրիշի կողմից ներշնչված բովանդակութիւնները դարձնելու վիճակի մեջ է արտահայտվում հիպնոզի առանձնահատկութիւնը:

Հիպնոզը նման է արթուն վիճակի, բայց և տարբերվում է նրանից: Հիպնոզով յետի դերեկտիվները վերացած են, դիտակցութիւնն արտակարգ չափերով նեղացած: Համարյա վերացված է յետի քննադատական կոնտրոլը, ներշնչված բովանդակութիւնները ընդունվում են ստանց քննադատութեան, արդելակող, տորմոզի յենթարկող մտապատկերների շղթաները չեն արթնանում. արթուն ժամանակվա ներշնչման մեջ յետի նկատվում են այս յերևույթները: Հիպնոզի ժամանակ ամէլի իրիտ և ցայտուն են արտահայտվում այդ հատկանիշները:

5. Յեթե հիպնոզը արթուն վիճակի համեմատութեամբ սկզբունքային հիմնական տարբերութիւններ չունի, նշանակում է, իրաւունք չունենք ընդունելու վոր մարդ հիպնոզի ժամանակ բոլորովին նոր հոգեկան հատկութիւններ է հանդես բերում: Իրաւես մարդ չի կարող հիպնոզի ժամանակ վորակական այնպիսի արտակարգ բան անել, վորը չի կարող արթուն ժամանակ չկատարել. Տիշտ է, հիպնոզի ժամանակ կարող ենք մկանների ու զգայարանքների ուժը մեծացնել, մտապատկերներն ինտենսիվ դարձնել, իլլյուզիաներ ու հալլուցիցիաներ արթնացնել, տանյակ ածրիներով մուսցված մտապատկերները վերհիշել և այլն, բայց այդ բոլորը ամէլի փոքր չափերով կարելի չէ վերապրել նաև արթուն ժամանակ: Հենց դրա համար էլ հիպնոզը չպետք է արտակարգ գերբնական մի յերևույթ համարել, վոր պետք է ուսումնասիրվի այլ մեթոդներով ու սկզբունքներով, այլ հիպնոզը պետք է ընդունել իրբև սովորական պսիխո-Ֆիզիկական կյանքի արտահայտութեան մի յուրատեսակ ձևվր, վոր յենթակա չէ ընդհանրական պսիխո-Ֆիզիկական որենքների:

6. Հիպնոզի ժամանակ գործում է ուղեղի մի վորոշ մասը, մյուս մասերը քնած-տորմոզված են, այդ մասերը իրար հետ միացնող կամ ուրջները, կարծես, փակված են, և քանի վոր ուղեղի զոնտայան բաժինների մեծ մասի գործունեութիւնը տորմոզված է, այդ պատճառով էլ անարժեք է դառնում հիպնոզվածի տրամաբանական մտածողութիւնը, նա չի կարողանում անցյալի փորձը լրիվ ոգտագործել, դառնում է կամակատար, հեշտութեամբ ներշնչման յենթակա: Հիպնոզը նյարդային սիստեմի կենտրոնական

պրոցեսները արդյունքն է, գրգիռներով և խոսքերով հիպնոզին աղբում է ուղեղի վրա, վորն էլ իր հերթին աղբում է ներքին ու արտաքին որգանների վրա. յերբ հիպնոզի ժամանակ զգայարանները չեն գործում, այդ չի նշանակում, թէ նրանց նյարդերը գրգիռներ չեն հասցնում ուղեղի համապատասխան կենտրոնին, այլ նշանակում է, վոր ուղեղային կենտրոնը ժամանակավորապես պարալիզի չէ յենթարկվել, վորի հետևանքով և զգայարանները նորմալ գործունեութիւն չեն ցուցադրում: Հիպնոզը պսիխո-Ֆիզիկական ներքին պրոցես է:

### ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

#### I

1. Ի՞նչ դեր ունի յենթադիտակցականը ըմբռնման, աղպեր-ցեպցիայի, մտածողութեան ստեղծադրութեան և քնի ժամասակ ինդիւրներ վճռելու հարցերի ժամանակ:
2. Ի՞նչպէս է աղբում յենթադիտակցականը մարդու արտաքինների ու վարմունքների վրա:
3. Յենթադիտակցի դերը յերկու յեսեր առաջացնելու ինդրում:
4. Ի՞նչ կարծիք ունի Վ. ՉեՄՍԸ հոգեկան որբերտանների մասին:
5. Վորո՞նք են յենթադիտակցականի առանձնահատկութիւնները:

#### II

1. Ի՞նչ տեսակ գրգիռներից է առաջանում յերազը:
2. Յերազի մտապատկերները հոգեբանական տեսակետից ինչո՞վ են տարբերվում արթնութեան մտապատկերներից:
3. Ի՞նչ է տեղի ունենում գլխուղեղի մեջ յերազ տեսնելիս և ի՞նչպէս բացատրել յերազի մտապատկերների անկանոնութիւնը:
4. Հնարավո՞ր են կապակից մտքերը յերազի ժամանակ:
5. Շա՞տ մեծ արագութեամբ են իրար հաջորդում յերազի մտապատկերները:
6. Ինչո՞ւ յերազի մտապատկերները կապված չեն մտտորական շարժումների հետ. հնարավո՞ր է յերազի ժամանակ շարժումը:
7. Ի՞նչպէս բացատրել յերազում թռչելը, վայր ընկնելը, լսելով լիւր, շարժվել չկարողանալը, մերկութիւնը, մեծ ջրեր տեսնելը:
8. Վ՞որ զգայարաններին են վերաբերվում յերազները:
9. Կարե՞լի չէ արհեստական կերպով յերազ առաջացնել:

10. Ինչպե՞ս են առաջանում հիշողական բնույթի յերազները :
11. Ի՞նչ է նշանակում ուղղակի ցանկութեան յերազներ :
12. Ի՞նչ է նշանակում դիմակավորված ցանկութեան յերազներ և ինչ բացատրութեան է տալիս Ս. ՖՐՈՅԴԸ :
13. Տալ դիմակավորված յերազի մի քանի որինակ :
14. Ի՞նչ կարծիք ունեյին անկուլտուրական և քիչ կուլտուրական ժողովուրդները յերազի մասին :
15. Ի՞նչ բնական հիմունքներ դոյութեան ունեն մարդտրեական—գուշակողական յերազները բացատրելու համար :

### III

1. Ի՞նչ բնորոշ առանձնահատկութեաններ ունի ներշնչումը :
  2. Ի՞նչ է նշանակում ինքնաներշնչում և մասսայական ներշնչումն :
  3. Ի՞նչ առանձնահատկութեաններ ունի հիպնոտիկ վիճակը և ինչպե՞ս է առաջ դալիս :
  4. Ինչպե՞ս է աղղում հիպնոզը շարժողական, (մոտորական) սֆերայի վրա :
  5. Ինչպե՞ս է աղղում հիպնոզը մարդու զգայարանների վրա :
  6. Հիպնոզի ժամանակ հնարավո՞ր են իւլյուզիաներ և հալյուցինացիաներ :
  7. Ինչպե՞ս է աղղում հիպնոզը հիշողութեան և յեսի վրա :
  8. Հիպնոտիկ քանթո՞ տեսակ քուն դոյութեան ունի :
  9. Հիպնոզի ժամանակ ներշնչած բովանդակութեանների ազդեցութեանը մնո՞ւմ է հիպնոզից հետո և վո՞րքան յերկար ժամանակ :
  10. Հե՞ շտ է հիպնոզից արթնանալուց հետո նորից հիպնոզելը :
  11. Հիպնոզն իսկական մտքով քուն է և ի՞նչով է տարբերվում քնից :
  12. Ի՞նչով է հիպնոզը նման յերազին և ինչո՞վ տարբեր :
  13. Ի՞նչ է նշանակում հիպնոզը ուժեղ ներշնչումն և :
  14. Ի՞նչ վիճակի մեջն է հիպնոզվածի գիտակցութեանը և ի՞նչ առանձնահատկութեան ունի :
  15. Ի՞նչով է հիպնոզը նման և տարբեր արթուն վիճակից :
  16. Հիպնոզի ժամանակ ի՞նչպես է աշխատում ուղեղը :
- ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՆԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԻՆ**  
 Ի՞նչ առանձնահատկութեաններ ունեն յենթազխակից յերկ-  
 վույթը, յերազը և հիպնոզը :

